

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵՍԿ

Ցարեկան գինը 10 բուրլի, կէս տարվանը 6 բուրլ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Դիւիշանից.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Տրա-
պիզոնի խաղական դպրոցները մասին. Տեղեկու-
թիւններ Թիւրքիայից. Բաղդադէնէր Կ. Պաշի-
րապիւրներէն. Կ. Պաշի չէպրենիք լրագրի պրո-
գրամը. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.
—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.—ԹԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ. Դարձեալ տեղակալութեան առի-
թով.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴԻՎԻՋԱՆԻՑ

Յուլիսի 17-ին

Լրագրիւններում անդադար կարգում ենք. թէ
այստեղ ու այնտեղ կողոպտեցին, սպանեցին Ա-
բաթովումսում մինչև անգամ իսկ Դիւիշանում,
նորսով անխնայ հակողութեան գաւառապետի,
տիրում է հանգստութիւն և խաղաղութիւն (աչ-
քով չը տամ): Ի դէպ պէտք է ասած, որ Ղազա-
րի գաւառը, որը երբեմն աւաղակայաց ապստա-
րան էր, այժմս զուրկ է սովորական հիւրերից,
որոնք փախչում են այստեղի գաւառապետ Կան-
չիւի խտուրթիւնից:

Այս տարի անձրեւները Դիւիշանում համ չեն
տալիս ամառանոց եկողներին. մի ամսից աւելի
էր անդադար անձրեւներ էր տեղում. մի խօսքով
դեռ օր չենք տեսել. մի 4—5 օր միայն լաւ ե-
ղանակ արեց, բայց և այնպէս գանգատով չը
կայ, քանի որ առողջ և լաւ օդի մէջ ենք:

Գաւառապետը տեսնելով, որ ամառանոց ե-
կողները իրարից հեռու են մանապէս, մտածեց
մի տեղ ունենալ, ուր բոլորն էլ կարողանան ի-
րար հանդիպել, երկու օրվայ մէջ անդրեցրեց
ձեռնարկել բոսօնդոյի շինութեան և իր դաշ-
նամուրը տեղաւորեցրեց այդտեղ, այդ գործին
մեծ օգնականութիւն արեց մի աշխուհ Եր-
տասարէ, օֆիցեր վաղաբակ Տէր-Յակովբանց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՐՁՅԱԼ ՏԵՂԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Վրում է ժամանակ կամ տրամադրութիւն,
ուր մարդ հակամարտում է իրան դեղորայքով բա-
նի բացարձակ կողմը միայն տեսնել, տեսականօ-
րէն միայն ընդել այդ բանը, չը տեսնութեան տա-
լով նրա գործնական կողմը, այն կողմը որ սերտ
կապված է լինելով կեանքի պայմանների հետ.
Ասկոված է աւելի կամ պակաս զոյգ ընթանալ
արանց հետ: Այդպիսի բան պատահում է սովորա-
բար կրքերի խաղաղման դէպքում, ուր մարդ,
թիվ մանաւանդ նա ինքնասանձ վարժութեամբ
սովոր չէ գտնել իր կրքերի աշխոյժը, բուն
թափը, համեմատ է ծայրայեղութեան, չափազան-
ցութեան և մինչև իսկ ընկնում է մոլորութիւն-
ների մէջ:

Այդպիսի մի ժամանակ է մեզ վարող ներկայ
ժամանակը: Մէկի մահաւաճը և միւսի տեղա-
պահութեամբը դարձել են կրքեր: Ոմանք դուրսի
են յուսով, ոմանք էլ խուժուած են երկուկուր-
մանք, որոնք ընդունում են Գերապետի Երե-
միայն բարենպաստ, որչափով և խաղաղասէր
եպիսկոպոս, յոյս են տածում թէ նրա ժամանա-
կաւոր կառավարութիւնը նպաստաւոր պիտի լի-
նի թէ ընթացիկ գործերի բարեւոյ դեկավարմե-
լուն և թէ արժանաւոր կաթողիկոսի ընտրութիւ-
նը նախապատրաստելու գործին: Կան էլ, որոնք
վախում են նրանից, համակողմ տեսնելով նրան
անձերի, որոնք հաճոյանալ չեն կարողացել ի-
րանց. արդ, որովհետ Գերապետի Տեղակալը իր

(աւելցանալով): Պարոնները յոյս ունեն, որ
ամսիս 22-ին իրանց փափազը կը լրացնեն: Մի
ուրախակի երեւոյթ ևս Դիւիշանում, դա առողջա-
կան սանիտարական մասնաժողովն է, որն ունե-
նալով անդամներ պոլիցիայից, դիւշից և զինուո-
րական վարչութիւնից, ամեն շաբաթ անէ-տուն
բակերը մտնելով մաքրել է տալիս կեղտոտու-
թիւնները, ստիպում է, որ արտաքինները խ-
տակ պահեն, փողոցները սրբել է տալիս և խիստ
հետեւում է, որ մթերքները թարմ, մաքուր լինեն,
—այնպէս որ ամառանոց եկողները ամեն կերպ
ապահովված են: Օրինակելի է այս բանը.—Մի
տխուր երեւոյթ ևս. տեղիս հայոց եկեղեցին անա-
երկու տարի է որ քանդվել է, արարողութիւնը
կատարում են քանդված ուսումնարանի մի ան-
կիւնում. եկեղեցին նորոգող, շինող չը կայ....
Հազիւ կարողացանք խնդրել քահանայից, որ կի-
րակի օրերը պատարագը ժամի 10-ին սկսի, որ-
պէս զի աղօթողները հասնեն ժամին, բայց ինչ
արած, որ մի փողերի սենեակում բոլոր ժամա-
ւորները չեն տեղաւորվում. ուսումնարանի հա-
մար էլ նոր շինութիւն է կառուցվում: Բայց
դանդաղ է առաջ գնում գործը:—Ասում են, թէ
վիճակաւոր առաջնորդը շուտով գալու է այս
ցաւերին վերջ դնելու համար....

Դիւիշանի վրայով դէպի Պարսկաստան, Երևան,
Նախիջևան, Օրդուբադ, Ագուլիս, Իզմիր, Էջմիա-
ծին, Շարուր, Նոր-Բայազէտ, Կարս, Արգանա,
Օլթի, Սարիղամիշ, Կաղզուան, Ղարաբաղի և
այլն, միշտ գնադան ապրանքներ ու զինուորնե-
րի համար պաշար են տանում. իսկ Երևանից մեծ
քանակութեամբ բամբակ, գինի և ուրիշ մթերք-
ներ են տանում դէպի Արստաֆա. գնացող-եկող-
ները թիւն էլ շատ շատ է: Այսպէս Դիւիշանը
մի կենտրոն է, ուր մեծ կենդանութիւն կայ: Ե-
թէ մի օր դէպի Պարսկաստան և Կարս երկաթու-
ղի անցնի, երկիրը շատ կառայնայ:

Երկաթուղին էլ գործի կարօտ չի մնայ: Օրը
գայ բարին էլ հետը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՊԵՐ

ԿՈՉՈՐԻՑ մեզ դրում են. «Օգոստոսի 4-ին, կի-
րակի օր, Կոչորի բոսօնդում Թիֆլիսի առաջ
օպերայի բարիտոն պ. Ֆրանկովսկի մի կօնցէրտ
տուեց, մասնակցութեամբ պ.պ. Լեւի, Օպօլինին
է պ. Ֆրանկովսկի ձայնը. դա զօրեղ, նոյն իսկ
հօր, ընդարձակ բարիտոն-բաս ձայն է, միայն
ցաւալի է, որ պարոնին պակաս է երգելու հա-
շակը, պակաս է նուրբ ու ճիշդ լսողութիւնը:—
Լեւի տէնոր ձայնը հինգ կոպէկ չարժէ և զար-
մանալ պէտք է, որ այդ տեսակ ողորմելի ձայ-
նով մարդիկ յանդուրժւում են բնւ գուրս գալ: Պա-
լուսով տաղանդաւոր պատմող է Կօնցէրտի վեր-
ջում ներկայացրած Չէխովի փողերի վաղվիւր ա-
մարանոցների կեանքից «Трагикъ по неволѣ»
(Ավաճաղ ողբերգու) վերադրով, անմասն կերպով
կատարեցին պ. պ. Օպօլինին և Պալուսով և
սաստիկ ծիծաղեցրին հասարակութիւնը: Կօն-
ցէրտին ներկայ էր աշխարհահռչակ Բուրլիշտէյն,
որը, ինչպէս ասում են, եկել էր Պետերբուրգի
կօնսերվատօրիայի և իր նախկին աշակերտ պ.
Ֆրանկովսկին լսելու համար: Կօնցէրտից յետոյ
Բուրլիշտէյն կանչեց Ֆրանկովսկուն և քաջաբերեց
նրան: Կօնցէրտից և ներկայացումից յետոյ պա-
րերը չը կայացան: Երեկոն ցուրտ և անձրեւային
էր, ժողովուրդը, որը շատ բազմաթիւ չէր, ներ-
կայացումից յետոյ, անմիջապէս շտապեց տուն
վերադառնալ: Սակայն թիվ հաստատ իմանային
որ Բուրլիշտէյն ներկայ կը դառնի երեկոյին,
շտապեց կը գային միմիայն դրա համար, որ
տեսնեն պատկառելի արտիստին և հեղինակին:

Չարմանալի են հայերը. որովհետեւ մեր լրա-
գրում տպեցինք Մօսկվայում նորերումս հրատա-
րակված «Լուսաղիւմին» վերնագրով վէպի մասին
մի քննադատութիւն, այդ պատճառով ոմանք
սկսեցին մեզ ուղարկել փողեր գիրքը ձեռք բե-
րելու համար, փոխանակ գրավածաւաններն ու-
ղարկելու: Խնդրում ենք «Լուսաղիւմին» գրքի

հրատարակողներին լրագրում յայտնել թէ հւմ
պիտի դիմել վերադիւնալ գիրքը ստանալու հա-
մար:

ԱՐԿԻՈՒՆԻՑ մեզ դրում են. «Մեզ մօտ ան-
ցեալներում 2 հայ տղաներ, մի շան պատճառով,
կուեւրով մին միւսին սպանեց: Միասին խաղա-
լով տղաներից մին սկսեց միւսին շանը խփել և
հայածել. շան տէրը բարկացաւ և հայտնելով իր
ընկերոջ, վերցրեց մի քար և խփեց իր ընկերոջ
գլխին: Քարը ճնդում է տղայի գլուխը և ա-
րիւնը սկսում է հոսել: Սակայն վիրաւորված
տղան կատարում է և սաստիկ դայրոյթի միջո-
ցին յարձակվում է քար գցողի վրա և իր դանա-
կը կոխում է նրա փորը: Վիրաւորված ընկնում
է և 2 ժամից յետոյ հոգին աւանդումս Սպանող
տղան էլ գլխից վիրաւորված լինելով, այժմ
պառկած է անկողնում, բայց վէրքը վտանգաւոր
չէ: Նա 15 տարեկան է: Այս ինչ բարբեր են
տիրում Արդուինում»:

Ելմիաձնի ձեռնարանի վարչութիւնը հետեւալ
յայտարարութիւնն է տպել «Արարատ» ամսագրի
օգոստոսի տետրակում. «Ներկայ տարուոյս փետր-
վարի 15-ին ձեռնարանից դուրս գնացած Լսարան-
ների ուսանողներից ոմանք խնդրամատոյց են
եղել ձեռնարանի վարչութեանս կրկին ընդունուե-
լու համար: Սրանով վարչութեանս յայտնում է ի
գիտութիւն բոլոր ուսանողներին, որոնք ունին
օրինաւոր վկայագիր, և կամենում են իրանց ու-
սումը շարունակել, որ վարչութիւնս պատրաստ
է ընդունել բոլոր ցանկացողներին և միջոց տալ
ձեռնարանական գանձնիքը աւարտելով Մրցագրի
(դիպլոմ) ձեռք բերելու: Վերստին ձեռնարան
մտնել ցանկացողները պէտք է խնդրադրով դի-
մեն Ամենապատիւ Սրբազան Տեղակալին: Դուրս
գնացած Առաջին լսարանիցները առանց քննու-
թեան կընդունուեն Երկրորդ լսարան, այն պայ-
մանաւ, որ ուսումնական տարուայ վերջում հա-
րցաքննութիւն թէ Առաջին և թէ Երկրորդ լսարան-
ների աւարկանքից. իսկ Երկրորդ լսարանիցները

չէ ուսում, Պօղոս, հեթանոսների կենդանաւործ,
ազատագնաց առաքեալը՝ միա ուսելը պաս չէ
համարում և նրա համար ամեն կերակուր սուրբ
է. սրա պատը ընկերին չը գալթակեցնեն է:
Պետրոս իր հետ կին է շրջեցնում, Պօղոս ասում
է, ինչ միթէ ես էլ չեմ կարող շրջեցնել: Երե-
ւում է թէ Պետրոսին ներված էր այդ, բայց
Պօղոսին ոչ: Վերջապէս շատ բաների մէջ նրանք
տարբերվում էին մէկը միւսից, որ նշան է թէ
դատողութիւնը գործում էր այն ժամանակ էլ և
մեկնութիւնը արգելված չէր: Այստեղից էր ան-
շուշտ Պօղոսեանների և Ապօղոսեանների հակա-
մրցութիւնը: Այդպէս ապրեցան իրանց կարգում
հեթանոս ազգերի քրիստոնէացած եկեղեցիներն
էլ և երբ նրանք ընդհանուր ժողովներում իրար
հետ այս և այն վարդապետական և նոյն իսկ
վարչական կէտերի վրա միաբան մնալ չը կար-
դացան, բաժանվեցան իրարից: Յոյն եկեղեցին
լատին եկեղեցու հետ միասին ութ տիեզերական
ժողով է ընդունում, ուրեմն այդ ութ ժողովների
սահմանադրութիւնները երկու համար էլ հաւա-
սար ընդունական են, այնուհետեւ նրանք մէկը
միւսից բաժանվում են և հերձվածող են հանդի-
սանում մէկը միւսի աչքին:

Հայ եկեղեցին միայն երեք տիեզերական ժո-
ղով է ընդունում, նոյնով է Գաղկեղոսինը, որ
չորրորդ ժողովն էր, միւսները վերաբերմամբ էլ
չորրորդ անտարբեր է մնում, եղել են նրանք
թէ չեն եղել, իր համար մի և նոյն է իսկ ինքն
ունեցել է իր ներքին ընդհանուր ժողովները,
որոնց գոյութեան մասին ամենին անհանգիստ
չեն եղել միւս եկեղեցիները:

Արդ, այդ բոլոր եկեղեցիները սուրբ Հոգու
նորհքից անմասն չեն համարվել, ունեցել են ձեռ-
նադրութիւն, սրբադրօնութիւն, նուիրապետու-

(Կը շարունակուի)

մին, և այլն: Այդ բոլորը ցոյց է տալիս, որ Սոյաբրիկի կարելիութեամբ չէ կամենում կապուել Անգլիայի համար «անպէտք» երկրներին հետ, ինչպէս Արմենիան է և իր քաղաքական գործունէութեան կենտրոնակէտը այդ երկրներին անց է կացնում: Սակայն: Ասում են որ Անգլիան արդէն հաղորդել է Ռուսաստանին, որ եթէ սա կամենայ, կարող է գրաւել Երզրում և Թիւրքիային պատկանող Արմենիայի միւս մասերը, նոյն իսկ Տրապիզոնը, սակայն Անգլիան կը դիմադրէ որ և է ձգտման: Միջկրկական ծովը և Սուէզեան ջրանցքը իր արդարեւորութիւնից խելուն: Թիւրքիայը կարծում է, որ այդ տեսակ առաջարկութիւնը կարող է ունենալ և մի ուրիշ նպատակ՝ զրաւել Ռուսաստանը դէպի Ասիայի խորքերը և ապա ողջը նրա դէմ երեքպետեան դաշնակցութեան ընդդէմ: Այս շատ նուրբ քաղաքականութիւն է և շատ հաւանական է, աչքի առջև ունենալով լորդ Սոյաբրիկի քաղաքականութեան անցեալը: Սակայն ռուսաց քաղաքականութեան զգուշութիւնն արդէն յայտնի է և հաղիւ թէ Ռուսաստանը կողմնակի չի ընդունել Անգլիայի զինավարութեամբ Փոլսանակ ձգտելու Երզրումը և Արմենիան գրաւել: Ռուսաստանը, ընդհակառակը, ջանում է զլրատարակել արաբները իր արեւմտեան սահմանները: Այդպիսով կը Անգլիան դարձնէ իր հիւպատոսութիւնը Երզրումում մի հասարակ հիւպատոսութիւն, Ռուսաստանն էլ անմիջապէս յետ կանչեց Երզրումից իր զինուորը: Երբեք Ռուսաստանը չի հրապարակում իր հիւպատոսութիւնը, որ նախկին հիւպատոս, վերին աստիճանի խաղաղասէր վիկտոր Մակոյի մօլին: Դա միջոցն է քաղաքական նրբութիւնների մէջ: Անգլիան ասում է Ռուսաստանին, «Խնդրեմ անուշ արեւը Հայաստանը, մենք նրան մեր ձեռքից բաց ենք թողնում, համեցեք, դռները բաց ենք:» Ոչ պատասխանում են ռուսները, մենք գործ չունենք այստեղ, մենք ձեր նահապետ առաջարկութիւնը լաւ ենք գնահատում և վճռել ենք խնայել մեր կուլիւսեան զինուորներին այժմէրը: Բնականաբար լրագրի թղթակիցն աւելացնում է, որ այդ դիմադրը համապատասխան է այն կարծիքներին, որ նորերումս յայտնել է իրան մի ռուս զինանախագէտ, որը լաւ տեղեակ է ռուս կառավարութեան մտադրութիւններին և յայտնում է բացարձակապէս և որոշ կերպով, որ ռուսները ամենակէն միտք չունեն կապուել ասիական շահերով, մինչև որ կը շարունակվի արեւմուտքում իրերի այժմեան բարդ և լարված վիճակը:

ԲԱՆԱԳԻՏՆԵՐ Կ. ՊՈԼՍԻ ԼՐԱԳԻՏՆԵՐԻՅ

Կ. Պոլսի լրագրիները հաղորդում են, «Զօրապետ Դէնտ, որը շատ երկար ժամանակ է վեր ռուսական ընդհանուր հիւպատոս էր ի Կարին, այժմ այդ պաշտօնէ հրաժարվելով՝ դրվել է ընդ արամադրութեամբ Մոսկովայի զինուորական հրամանատարին:»

Կ. Պոլսի «Stamboul» լրագրերը հաղորդում է, որ յոյն աւազակապետ Աթանաս իր խմբով Սև ծովի ափերի վրա միացել է աւազակներին մի այլ խմբին հետ: Աթանաս յափշտակել է Բագարձիքի մի հայ վաճառականի որդուն, որի համար 1000 ոսկի փրկանք է պահանջում: Նրիտանացի զինարձակված չէ: Տեղական իշխանութիւնը ամեն ջանք է թափում յանդուգն աւազակներին ձերբակալելու համար:

«Հայրենիք» լրագրում կարգում ենք, որ հանգուցեալ Պարոնեանի մեղուկը այս օրերս բաց-վեց: Ասանք որ կը յուսարան թէ ձեռագիրները պիտի գտնեն, յուսաբար եղան. միայն տեսարակ մը կաւ: «Շողոքորթը» վերնագրով, որուն մէջ քիչ մը բան գրված էր, ուրիշ ոչինչ: Յուսախաբութեան հարկ չը կայ: Պարոնեանի նման գրա-դեպ օրուան ժաման, քաղկէն ներքնական ներքև կը գրեն: Շատ ծրագրիներ կրնան ունենալ, բայց որքան չեն կարող դործադրել: Մասնաւոր կեանքի մէջ միայն օրն օրին կրնան ապրել:»

Նոյն լրագրը լսել է հաւատարմ աղբիւրներից թէ հայոց պատրիարքարանում լրջաբար խորհուրդ կայ ընտրել մի յանձնաժողով, որի պաշտօնը պիտի լինի պատրաստել աժուսան կ'ան օրինա-րէքը, որով կառաջնորդվին ամուսնական դատե-րը: «Տարակոյս» չը կայ, աւելացնում է լրագրիւրը, թէ երբ ունենանք օրինաբար մը, հարկ պիտի ըլլայ այն ժամանակ նաև ունենալ օրենսդէտ

դատաւորներ ալ: Պատրիարքական չրջաններու մէջ որոշված են արդէն այդ յանձնաժողովի ան-դամները, որոց ընտրութիւնը ի պաշտօնէ պիտի հաստատէ նորընտիր քաղաքական ժողովը:»

«Հայրենիք» լրագրում կարգում ենք, որ այս օրերս Կ. Պոլսում վախճանից Գրիստոստոսը Գինդի Ղազարոսեան: Նա աղգային ժողովի ան-դամ էր: Հանգուցեալն իր հողին աւանդեց Աղ-գային Հիւանդանոցում: «Իր վերջին մտածու-թիւնը, ասում է լրագրիւրը, Աղգային ժողովն ե-ղաւ. քանի մը օր առաջ գանգաւ յայտնած է թէ ժողովի վերջին մի քանի նիստերու ատենա-դրութիւնները իրան չեն հասած: Թաղման հան-դէսը պիտի կատարվի ի Սամաթիա: Հանգուցեա-լի մարմինը պիտի փոխադրվի ի Պալքիւր, իր ծնողաց քով:» Լրագրիւրը աւելացնում է, որ յու-ղարկաւորութեան հանդիսին ներկայ գտնվելու համար պատրիարքը հրաւէր ուղարկել է 7 եպիս-կոսոսներին և մի քանի վարդապետներին: Պատ-րիարքական փոխանորդն էլ նամակ գրած է Ս. Գէորգ եկեղեցու թաղական խորհրդին, ոչինչ ջանք չը խնայել հանդէսը չեղ կատարելու հա-մար: «Տարակոյս» չը կայ թէ աղգին ամեն դասա-կարգի ներկայացուցիչք պիտի փութան հրա-մեշտի ողջոյն տալու մի անձին, որը կէս դարէն աւելի աղգային գործիչ էր: Եւ պանդուխտներն էլ, որոնց նուիրեց իր կիրակներն այդ ծերու-նին, անշուշտ այսօր անոր դագաղի կտակն պիտի երթնան:»

Կ. ՊՈԼՍԻ «ՀԱՅՐԵՆԻՔ» ԼՐԱԳԻՏՆԵՐԻՅ

«Հայրենիք» խմբագիրները խցին համոզում ունին թէ հրատարակելով հայերէն այս նոր օ-րաթերթը՝ պարտականութիւն մը կատարած պի-տի ըլլան:

Յորմէ հետէ հայ մամուլը գոյութիւն ունի Տաճ-կաստանի մէջ, ընդհանրապէս բաւական համա-րուած է միայն մէկ հայերէն թերթ, մինչև մեր տաճիկ և յոյն հայրենակիցները պէտք զգացած են ամենօրեայ չորս հինգ օրագիրներու, որոց կենդան ալ ապահոված են: Ժողովուրդը մը բա-րոյապէս կը հաշմանդամի, երբ միայն մի թերթ կը հսկէ անոր մտքին ու սրտին վրայ: Այն ե-րիտասարդութիւնը, որ կը բուրդի շուրջն «Հայ-րենիք» օրաթերթի իրեն նպատակ դրած է ար-գիւնել այդ հաշմանդամութիւնը: «Հայրենիք» ուղղութիւնը մանրամասնօրէն պարզել կարելի չէ, այդ ուղղութիւն երևան պիտի գայ թերթին հրատարակութեամբը: Սակայն այժմէն կրնանք յայտարարել թէ «Հայրենիք» պիտի չըլլայ ստու-կին հանրային կարծիքի, և ոչ ալ անգոյն, չեղք թերթ մը:

Մեր մէջ բաւական տարածուած է այն համո-զում թէ օրագիր մը պէտք է մեծարէ ժողովուրդին նախապաշարունակները, և սրբութիւն համարի ա-նոր մոլորութիւնները: Կը կարծուի թէ օգտա-կարար թերթն այն է, որ կուրաբար կը հնա-զանդի հանրային կարծիքը: Մենք տարբեր կը մտածենք: Մենք համոզուած ենք թէ զբաղեանե-րն ստեղծուած չեն որպէս զի միայն փառաբա-նողներ ըլլան ժողովուրդի նախապաշարունակներուն: Ոչ, զբաղեաները կոչուած չեն ժողովուրդին կող-մէն երթալու, այլ կոչուած են անոր առաջնորդ-ներն ըլլալու: Գրագրեւ պէտք է տրիւ ժողովու-րդին, և ոչ թէ հնազանդի անոր: Բայց միթէ ժո-ղովուրդը սխալական է ամեն ատեն: Ոչ, ժողու-րդը բնագործ անսխալ է շատ անգամ, ժողովուր-դը շատ անգամ արդար է իր դատաստաններուն մէջ: Հրապարակաբար զբաղեան պաշտօնն է ո-րոշել թէ երբ արդար է ժողովուրդը, երբ անի-րաւ, երբ սխալական է, երբ անսխալ, ու պաշտ-պան հանդիմանալ արդարութեան դատին, մաքա-ռի անիմաւորութեան դէմ:

«Հայրենիք» պիտի չըլլայ նաև անգոյն չեղք թերթ մը: Գոյութեան իրաւունք չունի անգոյն, չեղք թերթը: Հանրութեան վերաբերեալ խղիւր-ներուն մէջ չեղք միայն վատութիւն է: Թող չը կարծուի սակայն թէ երբ թերթ մը չեղք չէ, պէտք է որ անպատճառ մոռորուած ըլլայ կու-սակցական անձուկ ուղու ու մտքով, պէտք է որ այդ թերթ խղիւրթիւրէ իրողութիւնները, ծած-կէ ճշմարտութիւնը, ուրանայ արժանիքն անոնց, որք իրեն հակառակ կարծիք ունին: Շատ սխա-լ է այսպիսի ըմբռնում: Երբ թերթ մը ունի որոշ գոյն և ուղղութիւն, և պատուաւոր թերթ է, երբեք չը զիջանի ժողովուրդը խաբուու: «Հայ-րենիք» բաղձանքն է իր ուղղամտութեամբը զը-բաւել հանրութեան համարումը և իր հակառա-կորդներուն ալ յարգանքը:

«Հայրենիք» հրատարակիչները ըմբռնած են թէ իրենց պարտականութիւնը շատ աւելի մեծ է քան ուրիշ և և է թերթի պարտականութիւն, վասն զի այս թերթի զինն անգրան ոչինչ է, որ նա պիտի կրնայ մտնել մեր ընկերութեան ամեն խաւերուն մէջ. եթէ պիտի ըլլայ ապարանքի թերթը, պիտի ըլլայ նամանաւանդ խրճիթին պիտի ըլլայ նամանաւանդ մտքով յետամնացին թերթը, և իր աղեղնութիւնը պիտի տարածուի ընկերական ամեն դասերու վրայ, հետեալաբ այդ ընդարձակ աղեղնութեան համեմատ ալ ըն-դարձակ բարոյական պատասխանատուութիւն կը ծանոթանայ խմբագրութեան վրայ: «Հայրենիք» հրատարակիչները կրնան վտահօրէն յայտարա-րել թէ պիտի չը թերանան իրենց պարտակա-նութեան մէջ:

ՆԱՄԱԿ ԹԻՌԻԳԻՍՅՈՅ

Կ. Պոլսի, 31 յուլիսի

Անցեալ կիրակէ, յուլիսի 21-ին, ա. Փրքի-չեան աղգային հիւանդանոցի մէջ խոր ծե-րութեան հասած վախճանեցաւ Գրիստոստոսը Ղազարոսեան: 60-ական թաւաններուն, երբ Սահմանադրութեան համաձայն բացուեցաւ աղ-գային երեսփոխանական ժողովը, այն օրէն նա երեսփոխան ընտրուեցաւ և մինչև իւր մահը պահեց այդ պաշտօնը: Գրիստոստոսը Ղա-զարոսեան յայտնի երեսփոխան Ստեփան Փափա-ղեանի հետ միացած՝ աղգային ժողովի յետագում կուսակցութեան, կամ ինչպէս այստեղ սովոր են անուանել «Ղալաթա օջաղի» գլխաւոր շարժիչ մարմինը կը կազմէր:

Իւր նախկին աշակերտի և վերջերս ընկերակից Ս. Փափաղեանի մահուամբ թէ և նորա համարեա ալ բաղուրը կտրուեցաւ, բայց նա, իւր դատա-մեալ ծերութեան չը նայելով, մինչև վերջին շունչ իւր բանակը չը թողնէ: Աղգային ժողովի ոչ մի նիստէն բացակայ չը գտնուէին դատ, իւր վեր-ջին մահուան անկողնուն մէջ անգամ ժողովի գործերով կը հետաքրքրուէր:

Ղազարոսեան իւր կուսակցութեամբ մեծ դեր է խաղացած օրուան դանազան խնդիրներու վերաբե-րութեամբ, զոր, կենտրոնացման և ապակենտրո-նացման, Սոյո և Ալթամարայ կաթողիկոսութեան, պատրիարքների ընտրութեան և մասնաւորաբար Խրիմեան Հայրիկի հրաժարեցուցման, կաթողիկոսա-կան, մասնաւոր վերջին ընտրութեան խնդիրնե-րով, որի մասին մինչև ի մահ բողբոջելով ալ մե-ռաւ:

Ղազարոսեան-Փափաղեան և ընկերները Ներ-սէս Պատրիարքի գործունէութեան խոչնդոտներն էին:

Ժամանակ մ'ալ հանգուցեալը փրկել հիւանդա-նոցի հոգաբարձութեան պաշտօնն է վարած: Բայց եթէ Գրիստոստոսը Ղազարոսեան աղգին մի իրական ծառայութիւն մատուցեր է, այն ալ պանդուխտ մշակներուն ձրիաբար կիրակնօրեայ դատաւարութիւն ընել և զրկ կարգաւ սովեց-նելն է: Նա այնքան աշխոյժով կը հետեւի այս գործին, որքան և Աղգային ժողովի նիստերուն:

Այս արտաբայ կարգի բնաւորութեան տեք մարդուն կեանքը հանգուցեալ տաղանդաւոր Պա-րոնեանի գրչին գեղեցիկ մի նիւթ է ընծայած, որ Ղազարոսեանը դասելով «Աղգային շրջերու» շարքը, նկարագրած է դայն ճարտար իւծօրով շօշափիկի դարձնելով նրա բնաւորութեան որոշ գծերը:

Աղգ. երեսփոխանական ժողովի յետագում կու-սակցութիւնը իրոցնիւով նախ Փափաղեանը և այժմ Ղազարոսեանը՝ անշուշտ մեծ հարուած կը ստանար, եթէ նախախնամութիւնը անոնց տեղ նոր յետագումագրիներ չը դրկէր:

Ս. պատրիարքի հրամանով մեծ հանդիսով թա-ղուեցաւ Ղազարոսեան: Յուղարկաւորութեան կը մասնակցէին բացի բաղմաթիւ քահանաներէ և վարդապետներէ նաև եօթն եպիսկոպոսներ, իսկ հանդիսին կը նախագահէր Պրուսայի առաջնորդ Բարթեղիմէոս եպիսկոպոս, որ իւր իւր կուսակ-ցութեան ապագայ պատրիարքական ընտրելին, հանգուցեալն աչքի լոյսին պէս կը սիրէր:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՌԻՐՈՐ

— Որպէս յայտնի է, Չինաստանում վերջին ժամանակներս մի զորեղ շարժում է սկսվել և ևրօպայիցիները դէմ է վերջերս երևաց, որ այդ

շարժման գլուխ են կանգնած դրամական մեծ միջոցներ ունեցող մի գաղախ ընկերութեան անդամները: Վերջինիցալ գաղախ ընկերութիւնը աշխատում է դահնկէց անել այժմեան թագաւորող տունը, որ թաթարական ծագում ունի, և դահ բարձրացնել հին-չինական Մենգա թագաւորական տոհմը: Գաղախ ընկերութիւնը կարող է աշողու-թիւն ունենալ, որովհետև դրա անդամներից շա-տերը օֆիցէրներ և զինուորներ են: Գաղախ ըն-կերութեան ծրագիրը, Չինաստանի գործերի հետ ծանօթ անձանց վկայութեամբ, հետեւեալն է. ժո-ղովուրդը զբոսել քրիստոնեաների դէմ՝ եւրօպա-կան պետութիւնների հետ ընդհարում ունենալու համար, որի հետեանքը, ի հարկէ, պատերազմը կը լինի: Այդ ժամանակ դաւաղիրները, երկրի խառնաշփոթ վիճակից օգուտ քաղելով, կաշխա-տեն ի կատար ածել իրանց ծրագիրը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՏՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԳՈՒԳ, 5 օգոստոսի: Երէկ առաւօտեան 10¹/₂ ժամին Կրասնօ-Սելօ ժամանեց Թագաժա-ռանգ Յէսարէվիչ, վերջացնելով իր իննամեայ ճանապարհորդութիւնը: Նախընթաց օրը, օգոստո-սի 3-ին, երեկոյեան 10 ժամին Նոցա Կայսերա-կան Մեծութիւնները Մեծ Իշխանուհի Կսէնիա Ալէքսանդրովնայի և Գէօրգի ու Միխայիլ Ալէք-սանդրովիչ Մեծ Իշխանների հետ Կրասնօ-Սել-օից գնացին Տոմսո կայարանը Օգոստափառ ճա-նապարհորդին դիմաւորելու: Առաւօտեան 10 ժա-մին Կրասնօ-Սելօի դրօշակներով և բոլորքներով զարդարված կայարանը ժամանեցին յունաց թա-գաւորին, Մեծ Իշխանուհիները և Մեծ Իշխանները: Այդտեղ էին հաւաքված և միմիտրները, Թագա-ւոր Կայսրի ավիտան և Կրասնօ-Սելօի բանակում գտնվող զօրաբաժինների գլխաւորները: Կայարա-նից ճանապարհի երկարութեամբ շարքով կանդ-նած էին զօրքերը: Ժամը 10 և 30 րօպէին Կրաս-նօ-Սելօի կայարանին մօտեցաւ Կայսերական գնացքը Նոցա Մեծութիւնների և Թագաժառանգ Յէսարէվիչի հետ միասին: Վազօնից դուրս գա-լով Թագաժառանգ Յէսարէվիչ անցաւ նրան դի-մաւորող և ուրախութեամբ ողջունող շարքերի մէջ: Կայարանից Նոցա Կայսերական Մեծութիւն-ները Օգոստափառ Երեկոյեանով կարճ ժամանա-կով մտան պալատը, իսկ այդտեղից գնացին և-կեղեցի շնորհակալութիւն անելու Տէր Աստու-ծուն Թագաժառանգ Յէսարէվիչի աշղո վերա-դարձի համար: Մեծ վրանում պատրաստված նա-խաձային, որ ներկայ էին Օգոստափառ ընտա-նիքը, միմիտրները, ավիտան և զինուորական գլխաւորները, Մեծ Իշխան Վաղիմիր Ալէքսանդ-րովիչ առաջարկեց Թագաժառանգ Յէսարէվիչի, Թագաւոր Կայսրի և Կրասնօ-Սելօի բանակի կե-նացնելը:

ՊԱՐԻՉ, 5 օգոստոսի: Սերբիական Թագաւորը հօր հետ միասին երեկոյեան ժամանեց այստեղ. նրան դիմաւորեց կայարանում նախագահ Կարնիօ կողմից ուղարկված օֆիցէրը:

ՇԱՆՍԱՅ, 5 օգոստոսի: Պէկինի իշխանութիւն-ները քրիստոնեաների դէմ բռնութիւն գործ դնե-լու համար օտար պետութիւնների պահանջած բա-ւարարութիւն տալուց հրաժարվում են: Գիսլովա-տիական ներկայացուցիչները սպառնում են անդ-լիական, ֆրանսիական, ամերիկական և գերմա-նական միացած նաւատորմների գործակցութեան դիմել, եթէ չինական կառավարութիւնը նրանց պահանջներին բաւարարութիւն չը տայ:

ՆԻՇՆԻ-ՆՈՎԱԳՐՈՐԻ, 6 օգոստոսի: Գործերը կենդանանում են: Թէյի հետեւեալ գնին են յայտն-ված. բայիսովեան թէյի մէկ արկղը արժէ 102 րուբլուց մինչև 215 րուբլի, խանկովեան թէյն արժէ 115 րուբլուց մինչև 220 րուբլի. մօտ 5,000 արկղներ են ծախված. 92 և 98 ֆունտա-նոց Կեպիսեան թէյի իւրաքանչիւր արկղը ծախ-վեց 150 րուբլուց մինչև 156 րուբլի: Վիստկայի սկիւռի մաղեղներ արտասահման ծախվեց 20 և 25⁰/₁₀ րով թանգ անցեալ տարիներից. պարսկա-կան մրգեղէնների առևտուրը հանդարտ է ընթա-նում. քիչ են երկրէ. շատ ապրանք է բռնված Վօլգայի վրա չրի փոքրութեան պատճառով:

ՊՐԱԳԱ, 6 օգոստոսի: Այստեղ հասան հիւրերը Կիէվից և անյապաղ հրաւիրեցան քաղաքային կուրը, ուր նրանց հանդիմաւոր կերպով ընդու-նեցին: Հէնց որ կիէվցիները ցուցահանդէս եկան, հասարակութիւնը սիրալիւր կերպով ողջունեց

նրանց «ուրա» և «счастья» աղաղակներով, ներկայ եղողներին մի քանիսը ուսուցիչ օրհներգը երգեցին:

Բերլին, 6 օգոստոսի: Այսօր տեղի ունեցավ արևելյան հիւանդանոցները բժշկելու համար կոթի ինստիտուտի բացումը: Մի քանիսը խորհրդակցութիւնը հացի վրա մաքսային հարկը վերացնելու կամ փոքրացնելու վերաբերմամբ այն հետեւեցին, որ վճարվելը չի դիմել այդ միջոցներին ոչ մէկին:

Բերլին, 6 օգոստոսի: Միւսիւններու լիւրճի մէջ Բերլին և Կայնայի մէջ եղած ճանապարհի վրա այսօր առաւօտեան ընդհարում տեղի ունեցավ Պարիզից դուրս եկած արտակարգ

գնացքի և Բերլինի եկող մարդատար գնացքի մէջ, որի ժամանակ սպանվեցան 141 և վիրաւորվեցան 23 մարդիկ:

Վիէննա, 7 օգոստոսի: Կիւնից հիւրերի Պրագա զաւու ժամանակ կատարված ցոյցերը ջերմ կերպով քննադատում են այստեղի լրագրողները, որոնք պահանջում են իշխանութեան միջամտութիւնը: Պրագայից հաղորդում են, որ պոլիցիան դիտարկութիւն ունի արգելել կիւնից հիւրերին՝ ցածր սպիտակ զինարկներ կրել, որովհետեւ զրանք ուշադրութիւնը շատ են գրաւում: Կալանաւորված են մի քանի չէխեր, որոնք ուրա էին աղաղակում:

Խմբագիր-հրատարակող՝ ԳԻՒԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆՈՐ ՀԻՐԱՆՈՑ „ԴԱՆԻԱ“

ԹԻՖԼԻՍԻՄ

Գաղաքի կենտրոնում, Գոյօվնիսկի պողոտէի վրա: Գեղեցիկ և մաքուր կահաւորված սենեակներ, օրը 60 կօպէկից մինչև 5 ռուբլի, ամսով մեծ զիջում է անվում: Կերակուրները թարմ և համալ:

2—36



Մ. Գ. ՅԵՅՏԼԻՆԻ

ԺԱՄԱՅՈՑՆԵՐԻ ՄԱԳԱՋԻՆԻ
ՕՊՏԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԻԲԸ

Պաշտօնի այդու դիմաց, անկիւնի մագազինում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոր ոսկեայ, նիկելեայ, պողպատեայ և կրկայի ոսկորից ԱՎՆՈՅՆԵՐ, ՊԵՆՏՆԵՆԵՐ և ԼՈՐՆԵՏՆԵՐ: Թատրոնական և զաւտային ԲԻՆՈՎԼՆԵՐ, ՋԵՐՄԱՆՈՒՄԵՐ, թէ սենեակների, թէ դուրսը կախելու և թէ վանդակների համար: Վերաբաւեցված և վիճակային ունեցող ՄԱԿՍԻՄԱՆ, Ջերմաչափեր: Լօրնէտի և պէնսելի համար ոսկեայ, արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաղեայ և մետաղական թելեր:

Այնոցներ և պէնսելներ տրվում են նմանապէս բժշկների պատուէրով:

Մագազինում յանձն են առնում նմանապէս փչացած իրերի նորոգելը և ապագիւնների դնելը:

ԳՆԵՐԸ ամենաշափաւոր են:

23—50 (5)

ԱՌԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նադօրնայա փողոց, № 9)

Յանկացողը, ունենալ իրանց առեւտրական գործերի համար անցեալ յունիս ամսում ուսման ընթացքը աւարտած ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՅԻՆԵՐ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանի անցին: Աւարտողները ստացել են մասնագիտական առեւտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատտեստատներ:

Ընդունելութիւնները սկսվելու են սեպտեմբերի 2-ից: Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Ծովկանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբարաբացիք դիմում են՝ Թիֆլիս, Կրեդիտно-коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу.

(Յուլ. 11, 25, օգ. 8, 22) 4—5

Լոյս տեսաւ

ՏԻԿԻՆ ԷԴԳՐԵՆ-ԼԵՖԼԵՐԻ

ՄՐՅՈՒՄՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Թարգմ. Ս. Հախումեան:

Գինը 40 կօպ.

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑՈՒՄ

Նորեկ աշակերտների ընդունելութիւնը սկսվելու է օգոստոսի 20-ից: Իւրաքանչիւր խնդրատու աշակերտ պէտք է անպատճառ ներկայացնէ իր ծննդեան, ծաղկի և ուսման վկայականները: Վնասութիւնները և վերաքննութիւնները սկսվելու են օգոստոսի 26-ից հետեւալ կարգով:

- Բշ. 26-ին կրօն, սուրբ պատմութիւն, եկեղ. սօմար և եկեղ. երգեցողութիւն:
- Գշ. 27-ին հայոց լեզու և հայոց պատմութիւն:
- Դշ. 28-ին ուսուցիչ լեզու և ուսուցիչ պատմութիւն:
- Եշ. 29-ին ֆրանսիական լեզու և ընդհանուր աշխարհագրութիւն:
- Ուրբ. 30-ին թուրքական լեզու, հանրահաշիւ, երկրաչափութիւն և արեւելագիր:
- Շբթ. 31-ին կենդանաբանութիւն, բուսաբանութիւն, բնախօսութիւն և նկարչութիւն:

Բացի նշանակեալ օրերից քննութիւնները լինելու չեն:

(Յուլիսի 25, օգ. 7 և 15) 2—3

ԱՍԻԱԲԱՂԻ միդասեան հայոց երկսեռ ծխական-եկեղեցական դպրոցի համար (որը բացվելու է երկու բաժանմունքներով), հարկաւոր են ՈՒՍՈՒՑԻՉ և ՈՒՍՈՒՑՈՒՅԻ, որոնք կթէ լինեն այլ և կին՝ աւելի յարմար կը լինէր:

Յանկացողները կարող են դիմել և առաջարկել իրանց պայմանները շուտաւոյթ՝ ԱՍԻԱԲԱՂԻ, նոյն դպրոցի հոգաբարձու ՆԻԿՈԼԱՅ ՏԵՐ-ՄԿԱՐՏԵԱՆՅԻՆ:

3—3

Բժշկականութեան մի ուսանող ՊԱՐԻՉՈՒՄ պատրաստ է հարկ եղած դիւրութիւններն ընծայել այն ամեն հիւանդներին, որոնք Պարիզ են գալիս իրանց ցաւերը դարմանելու, ցոյց տալով նրանց յարմարագոյն հիւանդանոցներ և ամենայայտնի բժիշկների անունների վրա մատնացոյց անելով մի և նոյն ժամանակ կատարելով և թարգմանի պաշտօնը:

Հասցէն խմանալու համար դիմել «Մշակի» խմբագրութեանը:

4—6

Ներկայ թւականի սեպտեմբերի 1-ից սկսեալ, մի ուսեալ հայ ընտանիք Թիֆլիսում ընդունում է ԳԻՇԵՐՈՒԿ աշակերտներ, որոնք կարող են բացի ուսուցիչից նաև գերմաներէն և ֆրանսերէն լեզուների գործնական վարժութիւններ ունենալ: Յանկացողները թող դիմեն «Մշակ» լրագրի խմբագրատունը:

3—12 (ե. 2)

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՒՈՐ Ե ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ—կրօնի շաբաթական 27 դասով և երգեցողութեան ու գրութեան—18—20 դասով: Նոյնպէս հարկաւոր է երկու ուսուցիչ—մէկը փառակալ դիւլի միդասեան դպրոցի համար, միւսը Ն. Աղուլիսի դպրոցի (Վերջինը—ուսուցիչ լեզու համար—25 դասով): Պայմանները խմանալու համար դիմել Թիֆլիս, Южные номера, Тиграпу Гюзальяну.

3—3

ՎԵԼԻՍԻՅԻՆԻ ՕՐԻՈՐԴԱՅ ԴՊՐՈՑԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ խնդրում է պ.պ. հրատարակիչին, բնի և հեղինակներին իրանց հրատարակութիւններից միմի օրինակ նուիրել Վելիսիյի խէի դպրոցի աղքատիկ դրաղարկներին: Գրքեր նուիրել ցանկացողները կարող են ուղարկել ուղղակի Վելիսիյի խէի դպրոցի հոգաբարձութեան անունով հետեւեալ հասցէով: Мукузанская почтовая станция, село Велицхихе, Попечительству армянской школы.

3—3

ПАРФЮМЕРИЯ
ВИКТОРИЯ РЕТИНА.
мыло олео-вазелиновое
РОЯЛЬ - КОНО.
ДУШИ ВЫСШЕГО ДОСТОИНСТВА
ИКСОРОНАКСЪ И ВИОЛЕТЪ.
О-ДЕ-КОЛОНЪ ДВѢТОЧНЫЙ
РАЗНЫХЪ ЗАПАХОВЪ.
Въ Высочайше утвержденномъ Кавказскомъ Товариществѣ торговыхъ аптекарскими товарами въ Тифлисѣ и Баку.

ПАРФЮМЕРИЯ
РОЗУЛ-ЧОУЧ.
Олео-вазелиновое мыло
РОЗУЛ-ЧОУЧ
ДУШИ ВЫСШЕГО ДОСТОИНСТВА
ИКСОРОНАКСЪ И ВИОЛЕТЪ.
О-ДЕ-КОЛОНЪ ДВѢТОЧНЫЙ
РАЗНЫХЪ ЗАПАХОВЪ.
Въ Высочайше утвержденномъ Кавказскомъ Товариществѣ торговыхъ аптекарскими товарами въ Тифлисѣ и Баку.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԿԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԿԵԱՆ—10—11 ժ. վիրաբուժութեան (և ատամնաբուժութեան) սիֆիլիսի և աչքացաւի բժշկութիւնը—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆԲՈՒՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ՊՐՍՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12 1/2—1 ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱՐՈՒՄԻՍԻ—5—6 1/2 ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտերապիա).
ՆԱԻԱՍԱՐԿԵԱՆ—6—7 ժ.
Վճար—50 կ.: Համախորհրդի (Կոնսիլիումի) համար առանձին:

Հիւանդանոցի վերառեսուչ բժշկագետ Նաւասարդեան

Գլխաւոր պատկեր
Հետաքրքիր
Վում է Թիֆլիս
սում և Բագ
Լուս Բարձրա
զոյն հաստատ
Վաճառ
ապրանքի
վաճառման կողմ
կասեան ընկ
րութեան մօտ
35—50 (2)



ՄԻՇՈՒՆԱՅ
ՄԿՆԵՐ ԿՈՏՈՐԵՒՈՒ ՐԻՍ ԳՈՒՄԵԱՆԻ ՄԻՇՈՑՆԵՐԸ
Գլխաւոր պատկեր գտնվում է Թիֆլիսում և Բագուում, Բարձրագոյն հաստատված դեղատան ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մօտ:
41—50 (2)

Լոյս տեսաւ

ՍԱՄՈՒԷԼ ԲԱԼԱՂԵԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆԸ

ՄԻԿՐՈՐՆԵՐԸ

Ծախվում է Կենտրոնական դրամաւաճառանոցում:

2—3